

**‘2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ՝ ՄՐՑՈՒՅԹԻ 9-ԴՊ
ՇՐՋԱՆԻ II ՓՈԻԼ**

‘2018թ. ՀՀ մարդկային ռեսուրսների լավա-ույն կառավարիչ՝ անվանակարգում հայտարարված մրցույթի 9-րդ շրջանի երկրորդ փուլին ներկայացվում է հինգ հարցից բաղկացած մեկ հարցաշար, մեկ խնդիր, առաջադրանքներ՝ Հակասություններ և բացահայտումներ՝ ու ‘Գրագիտություն և իրազեկվածություն, ինչպես նաև հոգեմտածոցության և սոցիալական կողմնորոշմանը վերաբերող թեմաներից:

Հարցաշարի 1-ին, 3-5 հարցերի ճիշտ պատասխանները կգնահատվեն յուրաքանչյուրը 2 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր: Հարցաշարի 2-րդ պատասխանը կգնահատվի 4 միավոր: Հարցաշարի առավելագույն միավորների թիվը կազմում է 12 միավոր:

Խնդրի լուծման յուրաքանչյուր ճիշտ քայլ կգնահատվի 2 միավոր, սխալ՝ 0 միավոր:

Հակասությունների բացահայտման առաջադրանքի յուրաքանչյուր ճիշտ պատասխան կգնահատվի 2 միավոր՝ սխալ պատասխան՝ 0 միավոր:

‘Գրագիտություն և իրազեկվածություն խորագրով առաջադրանքի յուրաքանչյուր ճիշտ պատասխան կգնահատվի 0.2 միավոր՝ սխալ պատասխան՝ 0 միավոր:

Հոգեմտածոցության վերաբերող առաջադրանքի յուրաքանչյուր ճիշտ պատասխանը կգնահատվի 0.2 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր:

Երկրորդ փուլին ներկայացված առաջադրանքներից և առաջին և երկրորդ փուլերի արդյունքներով առավել բարձր միավոր հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի հաջորդ համարներում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Երկրորդ փուլին ներկայացված առաջադրանքների պատասխաններն ուղարկել press@gortsq.am էլեկտրոնային հասցեին մինչև 2018թ. մայիսի 30-ը: Առաջադրանքների ճիշտ պատասխանները կտեղադրվեն www.gortsq.am կայքէջում՝ 2018թ. մայիսի 31-ին:

ՌԵԶԱՐԴՈՒԹՅՈՒՆ – Մրցանակաբաշխությունը, հաղթողի պատվոգիրը, HR-ի միջազգային խորհրդանիշով ոսկեպատ շքանշանը, վկայականը, հուշանվերը և անակնկալ մրցանակը հանձնելու արարողությունը տեղի կունենա 2019 թվականի փետրվարին՝ Ծաղկածորում:

**‘2018Թ.ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ՝
ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆՏՐԱԿԱՆ II ՓՈԻԼԻ
ՀԱՐՑԱՇԱՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ**

1. Քաղաքացիաիրավական պայմանագրով նախատեսված պարտավորությունները ‘Կատարողի՝ մեղքով չկատարվելու դեպքում նրա նկատմամբ ոչ ոք պատասխանատվության միջոցը չի կարելի կիրառել՝

ա) քրեական.

բ) վարչական.

գ) կարգապահական:

2. Պարապյուրդում հայտնված աշխատողը պարապյուրդի ընթացքում աշխատանքի է անցել մեկ այլ կազմակերպությունում: Այդ դեպքում (կա արդյոք ճիշտ պատասխան: Եթե կա, ապա որն է այն)

ա) պարապյուրդի համար աշխատողին տրվող միջին ամսական աշխատավարձի վճարումը դադարեցվում է.

բ) պարապյուրդի համար աշխատողին տրվող միջին ամսական աշխատավարձի վճարումը կասեցվում է այլ կազմակերպությունում աշխատելու ժամանակահատվածի տևողությանը համապատասխան.

գ) քանի որ այլ կազմակերպությունում եկամուտ ունի պարապյուրդ ձևակերպած գործատուն աշխատողին վճարում է նվազագույն ամսական աշխատավարձի չափով:

Պատասխան՝ ճիշտ պատասխանը ներկայացված պատասխանների մեջ բացակայում է:

3. Տասնհինգ տարուց ավելի աշխատանքային ստաժ ունեցող աշխատողներին աշխատանքից ազատման ստորև նշված ռ՝ր դեպքում է տրվում ավելի երկար տևողությամբ արձակման նպաստ՝

ա) հաստիքների կրճատման պատճառով աշխատանքից ազատման դեպքում.

բ) համատեղության աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում.

գ) կատարած աշխատանքին կամ պաշտոնին չհամապատասխանելու պատճառով աշխատանքից ազատման դեպքում:

4. Հերթափոխային աշխատողը կարող է մեկ այլ կազմակերպությունում աշխատել՝ հերթափոխային աշխատաժամանակով, եթե հերթափոխի համար սահմանված է 24 ժամյա աշխատանքային ռեժիմ:

ա) այո, կարող է.

բ) չի կարող, քանի որ աշխատաժամանակի տևողությունը գերազանցում է օրական 12 ժամը՝ ներառյալ սնվելու և հանգստի ժամանակը.

գ) կատարած աշխատանքին կամ պաշտոնին չհամապատասխանելու պատճառով աշխատանքից ազատման դեպքում:

5. Տոնական ոչ աշխատանքային օրվա նախօրյակին աշխատողը ներգրավվել է արտաժամյա աշխատանքում: Արտաժամյա աշխատաժամանակի տևողությունը պետք է՝

ա) կրճատել մեկ ժամով.

բ) աշխատողը չպետք է ներգրավվեր արտաժամյա աշխատանքում.

գ) չկրճատել:

ՉԻՆՈՒՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ՝

ՄԻՑՈՒՑԹԻ ԸՆՏՐԱԿԱՆ II ՓՈԻԼԻ

ԽՆԴԻՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Կազմակերպությունում աշխատողն աշխատում է գործավարձով: Աշխատանքային պայմանագրում նրա համար սահմանվել է շաբաթական հնգօրյա և օրական 8 ժամյա աշխատանքային ռեժիմ: Ամեն օր աշխատանքի ամենօրյա նվազագույն նորմաները կատարելուց հետո աշխատողը լքել է աշխատավայրը՝ աշխատանքային օրն ավարտվելուց 1 ժամ առաջ: Թվարկեք գործատուի գործողությունները՝ ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջներին համապատասխան:

Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 2 միավոր՝ սխալ պատասխան՝ 0 միավոր:

Պատասխան՝

1. աշխատողից պահանջել բացատրություն՝ ամեն օր մեկ ժամ շուտ աշխատանքը լքելու մասին,

2. կարգապահական տույժի կիրառում,

3. աշխատավարձից մեկ ժամվա աշխատավարձի պահում:

ՉԻՆՈՒՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ՝

ՄԻՑՈՒՑԹԻ ԸՆՏՐԱԿԱՆ II ՓՈԻԼ

ՆԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ՝

Նորմատիվ իրավական ակտերի մասին՝ ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:

Բացահայտեք վերը նշված պահանջին հակասող դրույթներ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքում:

Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 2 միավոր՝ սխալ պատասխան՝ 0 միավոր:

Պատասխան՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 79-րդ հոդվածի 3-րդ մասում, 107-րդ հոդվածում, 138-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում, 145-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում, 186-րդ հոդվածի

վերնագրում և ամբողջ տեքստում, 195-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունում օգտագործվում է պարապուրդ բառը, իսկ 165-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում և 265-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում օգտագործվում է հարկադիր պարապուրդ արտահայտությունը: Անհրաժեշտ է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետից, 265-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերից հանել հարկադիր բառը, քանի որ պարապուրդը սահմանող հոդվածում (հոդված 107-րդ) նշվում է պարապուրդ հասկացությունը, ոչ թե հարկադիր պարապուրդ հասկացությունը:

**‘2018Թ.ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ’
ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆՏՐԱԿԱՆ II ՓՈՒԼ
‘ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ’**

Մարդու գրագիտության մասին հաճախ ավելի շատ տեղեկություններ ենք ստանում նրա գրավոր խոսքից՝ քան բանավոր:

Կադրային քաղաքականությամբ և մարդկային ռեսուրսների կառավարմամբ զբաղվող անձանց գրավոր խոսքում, որոնք ուղղված են այս կամ այն պետական մարմնին կամ գրության մեջ օգտագործված արտահայտություններին, երբեմն կարել է հանդիպել որոշակի թերությունների: Կարելի է խուսափել սխալներից, եթե տեղեկացված լինենք, թե ստորև նշված արտահայտություններից որոնք են գրվում մեծատառերով, որոնք՝ փոքրատառերով:

Դրանք են՝ սահմանադրություն, հանրապետության նախագահ, վարչապետ, ազգային ժողով, կառավարություն, պետական մարմին, տեղական ինքնակառավարման մարմին, մարդու իրավունքների պաշտպան, մարդու իրավունքների եվրոպական դատարան, սահմանադրական դատարան, վճռաբեկ դատարան, վերաքննիչ դատարան, առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարան, հանրաքվե, բարձրագույն դատական խորհուրդ, կենտրոնական ընտրական հանձնաժողով, տարածքային ընտրական հանձնաժողով, կենտրոնական բանկ, գլխավոր դատախազ, ----- (նշեք Ձեր նախընտրելի նախարարության անվանումը) նախարարություն:

Ապացուցեք, որ տեղեկացված եք: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0.2 միավոր՝ սխալ պատասխան՝ 0 միավոր:

Պատասխան

Սահմանադրություն,

Հանրապետության նախագահ,

Վարչապետ,

Ազգային ժողով,

Կառավարություն,

պետական մարմին,

տեղական ինքնակառավարման մարմին,

Մարդու իրավունքների պաշտպան,

Մարդու իրավունքների եվրոպական դատարան,

Սահմանադրական դատարան,

Վճռաբեկ դատարան,

վերաքննիչ դատարան,

առաջին ասյանի ընդհանուր իրավասության դատարան,

Հանրաքվե,

Բարձրագույն դատական խորհուրդ,

Կենտրոնական ընտրական հանձնաժողով,

Տարածքային ընտրական հանձնաժողով,

Կենտրոնական բանկ,

գլխավոր դատախազ,

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

**՝2018Թ.ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ՝
ՄՐՑՈՒՑԹԻ ԸՆՏՐԱԿԱՆ II ՓՈԻԼԻ
ՀՈԳԵՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ԵՎ ՊԱՏԱՄԽԱՆԸ**

Կազմակերպության առջև կանգնած ամենահրատապ հարցի լուծման հանձնարարությունը տվեք ծույլ աշխատողին և նա դա կանի ավելի կարճ ժամկետում, քան աշխատասեր մարդը: Ինչու:
Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0.2 միավոր՝ սխալ պատասխան՝ 0 միավոր:
Պատասխան՝ Ծույլ մարդիկ որպես կանոն լինում են իրենց ուժերի վրա վստահ, ընտրում են խնդրի լուծման օպտիմալ եղանակը: